ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ
Ն-25

Գրանցված է Համապատասխանության
գնահատման նշանակված մարմինների
գրանցամատյանում
«28» նոյեմբեր 2024 թ.
N Ն-25 (Н-25) 2024
Վերաձևակերպվել է «28» նոյեմբեր 2024 թ.
Ուժի մեջ է մինչև «07» հուլիս 2027 թ.

Սույն վկայականը հավաստում է, որ «Փ. Աբաջյան» ՍՊԸ արտադրանքի սերտիֆիկացման մարմինը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի «Համապատասխանության գնահատման մարմինների նշանակման ընթացակարգը և չափանիշները հաստատելու մասին» N 623-Ն որոշմամբ համապատասխանության գնահատման մարմնի նշանակման համար սահմանված չափանիշներին և նշանակվել է որպես համապատասխանության գնահատման նշանակված մարմին (Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի սեպտեմբերի 22-ի N 1820-Ա հրաման, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի նոյեմբերի 28-ի N 2853-Ա հրաման) համաձայն հավատարմագրման վկայագրի (հավատարմագրման գրանցահամար՝ N 011/S-049) N 1, N 2 և N 3 հավելվածներով սահմանված հավատարմագրման ոլորտում ընդգրկված արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի ծածկագրի, ցուցանիշների և արտադրանքի բնութագրերը և նորմերը սահմանող նորմատիվ իրավական ակտի, համապատասխան տեխնիկական կանոնակարգով սահմանված նմուշառման մեթոդը սահմանող փաստաթղթի նշագրի:

ՀՀ, ք. Երևան, Աջափնյակ Գ-1 թաղ. 2/24

Էլ. հասցե; pabajyan@mail.ru, Հեռ. +374 (93) 92-03-92

(իրավաբանական անձի գտնվելու վայր, էլ. հասցե, հեռախոս, ֆաքս)

«Փ. Աբաջյան» ՍՊԸ արտադրանքի սերտիֆիկացման մարմնի նշանակման ոլորտը ներառում է Հայաստանի Հանրապետության (ՀՀ) և Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) հետևյալ տեխնիկական կանոնակարգերը՝

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ (ՀՀ) ԱԶԳԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐ**

1. ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 10-ի «Ցեմենտներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1136-Ն որոշում (միայն արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի «2523 10 000 0» ծածկագրի ներքո ներառված և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգման օբյեկտ չհանդիսացող արտադրանք):
2. ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 22-ի «Բետոնի ամրանավորման համար օգտագործվող պողպատե արտադրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 179-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 607-Ն որոշում

**ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ (ԵԱՏՄ) ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

1. Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի N 827 որոշմամբ ընդունված «Ավտոմոբիլային ճանապարհների անվտանգության» տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 014/2011):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ՝

Ստորագրող
ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆ
2102870448

2024-12-25 17:55:51 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆ
(ստորագրությունը)